

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

20 նոյեմբերի 1995 թ.

Սույն օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության և հայեցակարգի ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հիմնական հասկացությունները

1. Նախատեսվող գործունեություն - նախատեսվող տնտեսական, սոցիալական և այլ գործունեություն (կառուցում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական վերազինում, լուծարում):

2. Հայեցակարգ - հայեցակարգեր, ծրագրեր, համալիր սխեմաներ և գլխավոր հատակագծեր:

3. Լիազորված մարմին – շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության և հայեցակարգի ազդեցության փորձաքննությունն իրականացնող լիազորված պետական մարմին:

4. Ներկայացնող- հայեցակարգ մշակող և ներկայացնող:

5. Սահմանային չափ - նախատեսվող գործունեության հզորությունը բնորոշող սահմանային չափ (արտադրողականություն, հզորություն, մակերես, ծավալ, քանակություն և այլն):

6. Ձեռնարկող – իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն, որոնք մտադիր են իրականացնել որևէ նախատեսվող գործունեություն:

7. Փաստաթղթեր – շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության գնահատման համար ձեռնարկողի կողմից ներկայացվող փաստաթղթեր:

8. Լիազորված անձինք – մասնագետներ, հիմնարկներ, ձեռնարկություններ, կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ, որոնք մասնագիտական եզրակացություն մշակելու համար լիազորված մարմնի կողմից ստացել են մասնագիտական իրավասության հավաստագիր:

9. Ազդակիր համայնք – շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա մարզի (մարզերի), համայնքի (համայնքների) բնակչություն:

10. Հասարակական խումներ – նախատեսվող գործունեության և հայեցակարգի ներկայացում լրատվական միջոցներով, քննարկում ժողովներում և հասարակական կարծիքի հավաքում:

11. Մասնագիտական եզրակացություն – լիազորված անձանց կողմից փաստաթղթերի վերաբերյալ մշակված և լիազորված մարմին ներկայացված եզրակացություն:

12. Փորձաքննական եզրակացություն – լիազորված մարմնի կողմից նախատեսվող գործունեության և հայեցակարգի վերաբերյալ ձեռնարկողին և ներկայացնողին տրված դրական կամ բացասական եզրակացություն:

Հոդված 2. Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության նպատակը և սկզբունքները

1. Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է, որի հիմնական նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել հայեցակարգի և նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական բնականոն զարգացման վրա:

2. Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունն է՝

- առողջության, բնականոն ապրելու և ստեղծագործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքից.

- բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օգտագործման պահանջներից.

- էկոլոգիական համակարգերի հավասարակշռության և բնության մեջ գոյություն ունեցող բույսերի և կենդանիների բոլոր տեսակների պահպանման անհրաժեշտությունից նկատի ունենալով ներկա և ապագա սերունդների շահերը:

3. Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը հիմնվում է՝

- գիտական հիմնավորվածության,

- օրինականության,

- որոշումների ընդունման հրապարակայնության սկզբունքների վրա:

Հոդված 3. Փորձաքննության խնդիրները

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության խնդիրներն են՝

- վերլուծել նախատեսվող գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավորությունը և նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով էկոլոգիական բոլոր սահմանափակումները.

- գնահատել նախատեսվող գործունեության հայեցակարգը և դրանց այլընտրանքների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վտանգավորության աստիճանը.

- ստուգել շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր էկոլոգիական ազդեցության աստիճանը, հետևաքննելի

վերլուծման ամբողջականությունը և ստույգությունը, այդ հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսված միջոցառումների բավարարությունն ինչպես շահագործման և իրականացման գործընթացում, այնպես էլ արտակարգ իրավիճակների ժամանակ:

- ապահովել բնական պաշարների արդյունավետ, բանական օգտագործումը:

- արգելել շրջակա միջավայրի վրա անդառնալի վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած նախատեսվող գործունեություն, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

- ապահովել հասարակության ներգրավումը և մասնակցությունը փորձաքննության բոլոր փուլերում:

ԳԼՈՒԽ 2.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4. Փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունները

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա են հետևյալ նախատեսվող գործունեությունները:

ա) էներգետիկայի ոլորտում

- ատոմակայաններ և ատոմային ռեակտորով այլ կառույցներ,
- ջերմային էլեկտրակայաններ, գոլորշու և տաք ջրի արտադրության կայաններ,
- հիդրոէլեկտրակայաններ, այլընտրանքային էներգետիկայի կայաններ,
- երկրաջերմային կայաններ,
- միջուկային վառելիքի արտադրության և հարստացման վերափոխիչ կայանքներ,
- միջուկային վառելիքի միջանկյալ պահպանման կառույցներ,
- բարձր ռադիոակտիվության թափոնների վերամշակման և վերջնական տնդադրման կառույցներ,
- գործող և փակված ատոմակայանների և ռադիոնուկլիդների օգտագործվող կայանքների ռադիոակտիվ թափոնների վերամշակում և թաղում:

բ) լեռնահանքային արդյունաբերության ոլորտում

- հանքանյութերի արդյունահանում և վերամշակում,
- ածխի, նավթի և բնական գազի հանույթ և վերամշակում,
- ուրանի հանքաքարի հանույթ և վերամշակում, կոշտ և հեղուկ թափոնների վնասագերծում և հանքավայրի վերականգնում:

զ) քիմիական արդյունաբերության ոլորտում

- կաուչուկների, ռետինատեխնիկական իրերի և այլ օրգանական նյութերի արտադրություն և վերամշակում,
- նավթավերամշակման արտադրություն,
- անօրգանական թթուների, ալկալիների և այլ նյութերի արտադրություն,
- սահմանային չափը գերազանցող լվացող, մաքրող և կենցաղային քիմիայի այլ նյութերի արտադրություն,
- թունավոր և դեղագործական նյութերի արտադրություն,
- թունաքիմիկատների և քիմիական պարարտանյութերի արտադրություն.

դ) շինանյութերի արդյունաբերության ոլորտում

- ցեմենտի, կրաքարի, գաջի արտադրություն,
- սալիկների, շինարարական քարերի, երկաթբետոնյա կառուցվածքների և շինարարական այլ ապրանքների արտադրություն.

ե) մետալուրգիայի ոլորտում

- երկաթի, պողպատի և գունավոր մետաղների արտադրություն և մշակում,
- սահմանային չափը գերազանցող մետաղների մակերեսային մշակում.

զ) էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային արտադրության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող նախատեսվող գործունեություններ.

է) փայտի և թղթի արդյունաբերության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող նախատեսվող գործունեություններ.

ը) թեթև արդյունաբերության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող մանածագործական, գործվածքային, կոշիկի և այլ արտադրություն.

թ) սննդի արդյունաբերության, ձկնային տնտեսության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող նախատեսվող գործունեություններ.

ժ) քաղաքաշինության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող շենքեր, կառույցներ, համալիրներ և այլ նախատեսվող գործունեություններ.

ժա) քաղաքային տնտեսության ոլորտում

- կեղտաջրերի մաքրման կայաններ.

ժբ) թափոնների օգտագործման ոլորտում

- վտանգավոր և այլ թափոնների հեռացում կամ այդ նպատակով մշակում,
- թափոնների հեռացման օբյեկտներ.

ժգ) բնության պահպանության ոլորտում

- մարդու ազդեցությամբ խախտված բնական էկոհամակարգերի բարելավում և վերականգնում,
- կենդանիների և բույսերի նոր տեսակների ներմուծում.

ժդ) գյուղատնտեսության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող տարածքի բարելավում (այդ թվում՝ աղակալած հողերի բարելավում, ռոզման և չորացման ցանցերի կառուցում, ճահիճների չորացում, բերրի հողի պահպանում էրոզիայից, աղակալումից և որակի փոփոխությունից).

ժե) անտառային տնտեսության ոլորտում

- անտառավերականգնում,
- անտառի որակական կազմի բարելավում.

ժզ) ջրային տնտեսության ոլորտում

- ջրամբարներ ու պատվարներ, ամբարներ, խոշոր ջրանցքներ, մղիչ կայաններ և այլ ջրատնտեսական կառույցներ,
- ստորերկրյա ջրերի արդյունահանում.

ժէ) ենթակառուցվածքների ոլորտում

- մայրուղիների, թունելների, կամուրջների, մետրոպոլիտենի, երկաթուղիների, օդանավակայանների և սահմանային չափը գերազանցող ճանապարհների կառուցում,
- սահմանային չափը գերազանցող գազի, նավթի, գոլորշու և ջրատար խողովակաշարեր, ներառյալ դրանց զուգակցող սարքավորումները (մղիչներ, փոխարկման և կոմպրեսորային կայաններ),
- սահմանային չափը գերազանցող էլեկտրահաղորդման գծեր,
- սահմանային չափը գերազանցող վառելիանյութերի (այդ թվում՝ բնական և այլ գազերի) և քիմիկատների վերգետնյա և ստորգետնյա պահեստարաններ,
- ինժեներական պաշտպանիչ կառույցներ,
- գերհզոր կապի միջոցներ.

ժը) սպասարկման ոլորտում

- սահմանային չափը գերազանցող առևտրի կենտրոններ և տոնավաճառներ,

- սահմանային չափը գերազանցող հյուրանոցային և զբոսաշրջիկային համալիրներ,
- բենզակայաններ,
- սահմանային չափը գերազանցող հասարակական սննդի օբյեկտներ (ռեստորաններ, սրճարաններ, ճաշարաններ և այլն),
- ավտոկայաններ, երկաթուղու կայաններ,
- դիակիզարաններ և գերեզմանոցներ:

2. Նախատեսվող գործունեությունների սահմանային չափերը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 1-ին կետում թվարկված այն նախատեսվող գործունեությունները, որոնց ցուցանիշները չեն հասնում սահմանային չափերի, բայց իրականացվելու են այնպիսի տարածքներում, որոնց կարգավիճակը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

4. Լիազորված մարմնի որոշմամբ փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 1-ին կետում թվարկված սահմանային չափերը չգերազանցող, նախատեսվող գործունեությունները

- այն վարչատարածքային միավորի նախաձեռնությամբ, որի տարածքում նախատեսվում է իրականացնել գործունեությունը.
- նախարարությունների և պետական իշխանության այլ մարմինների նախաձեռնությամբ.
- այն համայնքների նախաձեռնությամբ, որոնց տարածքում կամ շրջակայքում պլանավորվում է նախատեսվող գործունեության իրականացումը.
- հասարակական կազմակերպությունների, առանձին խմբերի նախաձեռնությամբ.
- լիազորված մարմնի սեփական նախաձեռնությամբ:

Հոդված 5. Փորձաքննության շրջանակները

1. Փորձաքննությունն առնվազն պետք է ընդգրկի

ա) նախատեսվող գործունեության հնարավոր ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշում, նկարագրում և գնահատում

- կլիմայական պայմանների, բուսական և կենդանական աշխարհի, էկոհամակարգերի առանձին տարրերի, նրանց փոխհարաբերության ու կայունության, բնության հատուկ պահպանվող տարածքների, լանդշաֆտի, երկրաձևաբանական կառույցների, օդի, մակերեսային և ստորերկրյա ջրերի, ընդերքի, հողի,
- բնակչության առողջության և բարեկեցության,
- բնակավայրերի շրջակա միջավայրի,
- բնական պաշարների օգտագործման,

- պատմամշակութային հուշարձանների նկատմամբ.

բ) այլընտրանքային լուծումներ, այդ թվում՝ գրոյական գործողության այլընտրանք (նախատեսվող գործունեության բացառում), դրանց համեմատական վերլուծություն և առավել ընդունելի տարբերակի ընտրություն.

գ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության վերացման կամ նվազեցման միջոցառումներ.

դ) նախատեսվող գործունեության բնապահպանական վնասակար ազդեցության պատճառով ընտրված գրոյական տարբերակի դեպքում տնտեսական և սոցիալական զարգացման և շրջակա միջավայրի վրա հետևանքների մանրակրկիտ գնահատում:

2. Նախատեսվող գործունեության փորձաքննության ընթացքում գնահատվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը կառուցման, շահագործման, լուծարման ընթացքում և լուծարումից հետո, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում:

3. Նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության ընթացքում հաշվի են առնվում տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական, էկոլոգիական և պատմամշակութային առանձնահատկությունները:

Հոդված 6. Նախատեսվող գործունեության իրականացման ծանուցման կարգը

1. Ձեռնարկողը, որը մտադիր է իրականացնել սույն օրենքի 4 հոդվածի 1–ին կետում թվարկված որևէ նախատեսվող գործունեություն, պարտավոր է այդ մասին ծանուցել լիազորված մարմինին:

2. Ծանուցումը պարունակում է

ա) նախատեսվող գործունեության մասին հիմնական տվյալներ, մասնավորապես անվանումը, տեղադրման վայրը, նախատեսվող գործունեության նպատակը, բնութագրիրը (առանձնահատկությունները), ծավալը, սկսելու և ավարտելու ժամկետները.

բ) նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ հողատարածքի չափը, էներգիայի, ջրի և հումքի վերաբերյալ պահանջները,

գ) տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համառոտ նկարագրիրը,

դ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության հիմնական տվյալները, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների հնարավոր ազդեցության և վտանգավորության աստիճանը.

ե) ազդակիր համայնքի որոշումը տվյալ վարչատարածքային միավորի զարգացման պլանին նախատեսվող գործունեության համապատասխանության մասին.

զ) ազդակիր համայնքի որոշումը հողահատկացման մասին,

է) համապատասխան պետական մարմնի կարծիքը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ արտոնագիրը:

3. Ծանուցումն ստանալուց հետո 7–օրյա ժամկետում լիազորված մարմինն իրազեկ է պահում ազդակիր համայնքի ղեկավարներին և հասարակայնությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին:

4. Ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը ծանուցումն ստանալուց հետո 15–օրյա ժամկետում կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լսումներ (որի արարողակարգը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը)՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության, լսումների տեղի և ժամկետի մասին:

5. Եթե 30 օրվա ընթացքում ազդակիր համայնքի կամ հասարակայնության կողմից առաջարկներ չեն ուղարկվում լիազորված մարմնին, ապա ազդակիր համայնքի կարծիքը համարվում է դրական:

6. Սույն օրենքի 4 հոդվածի 4–րդ կետից բխող նախաձեռնության դրսևորումից հետո 30–օրյա ժամկետում լիազորված մարմինը որոշում է կայացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կամ չիրականացման մասին և իրազեկ է պահում փորձաքննության նախաձեռնության դրսևորողներին և ձեռնարկողին:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման անհրաժեշտության դեպքում ձեռնարկողը լիազորված մարմին է ներկայացնում 7 հոդվածից բխող փաստաթղթերը:

Հոդված 7. Փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը

1. Ձեռնարկողը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն ենթակա նախատեսվող գործունեության փաստաթղթերը սահմանված կարգով ներկայացնում է լիազորված մարմին:

2. Փաստաթղթերը և դրանցում պարունակվող տվյալների ցանկն ու ծավալը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը լիազորված մարմնի առաջարկով:

Հոդված 8. Փորձաքննության ենթակա փաստաթղթերի հրապարակումը և քննարկումը

1. Փաստաթղթերն ստանալուց հետո լիազորված մարմինը դրանց օրինակներն անմիջապես տրամադրում է մարզի կամ համայնքի ղեկավարներին, համապատասխան պետական մարմնին և ազդակիր համայնքին:

Ազդակիր համայնքի ղեկավարները 5–օրյա ժամկետում լրատվական միջոցներով տեղեկացնում են, թե որտեղ և երբ է հնարավոր ծանոթանալ և տվյալներ ստանալ (գրավոր կամ բանավոր) փաստաթղթերի մասին:

2. Լիազորված մարմինը, ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը 30 օրացուցային օրվա ընթացքում կազմակերպում ու ապահովում են հասարակայնության կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունը և լսումները: Հասարակայնության կարծիքը նշված ժամանակամիջոցում ներկայացվում է ազդակիր համայնքի ղեկավարներին կամ անմիջապես լիազորված մարմնին:

Եթե ազդակիր համայնքի թիվը մեկից ավելի է, հասարակական լսումների վայրը որոշում է լիազորված մարմինը:

3. Սույն հոդվածի 2–րդ կետից բխող ժամկետը լրանալուց հետո 10 օրյա ժամկետում ազդակիր համայնքների ղեկավարները հասարակայնության կարծիքը և իրենց կարծիքները ներկայացնում են լիազորված մարմնին:

4. Համայնքի ազդակիր լինելու կամ չլինելու հարցը վերջնականապես որոշում է լիազորված մարմինը:

5. Համապատասխան պետական մարմինները փաստաթղթերն ստանալուց հետո 30–օրյա ժամկետում ուղարկում են իրենց կարծիքը լիազորված մարմնին:

6. Եթե սույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերի համաձայն ոչ մի կարծիք սահմանված ժամկետում չի ներկայացվել լիազորված մարմին, ապա համարվում է, որ փաստաթղթերի վերաբերյալ բացասական կարծիք չկա:

7. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, և 6-րդ կետերի կիրառումը սահմանափակվում է կապված պետական, արտադրական և առևտրական գաղտնիքների հետ և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 9. Փաստաթղթերի փորձաքննության վերաբերյալ մասնագիտական եզրակացության ապահովումը

1. Մասնագիտական եզրակացությունը կարող են մշակել միայն լիազորված անձինք, որոնք ստացել են լիազորված մարմնի կողմից տրված մասնագիտական իրավասության հավաստագրեր:

2. Մասնագիտական իրավասության հավաստագրի տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Լիազորված մարմինը ապահովում է հասարակայնության մասնակցությունը լիազորված անձանց ընտրման բոլոր փուլերում:

4. Լիազորված մարմինն ստեղծում և պարբերաբար վերանայում է լիազորված անձանց վերաբերյալ տվյալների բանկը:

5. Փաստաթղթերն ստանալուց հետո 70-օրվա ժամկետում լիազորված մարմինը լիազորված անձանց միջոցով ապահովում է փաստաթղթերի վերաբերյալ մասնագիտական եզրակացության մշակումը: Մասնագիտական եզրակացության մշակման ընթացքում հաշվի են առնվում հասարակական, ազդակիր համայնքի և համապատասխան պետական մարմինների կարծիքները: Հիմնավորելու դեպքում լիազորված մարմինը կարող է նշված ժամկետն երկարացնել, բայց ոչ ավել, քան 180 օր:

6. Մասնագիտական եզրակացության մշակման աշխատանքներում արգելվում է ներգրավել այն լիազորված անձանց, որոնք մասնակցել են փաստաթղթերի մշակմանը:

7. Մասնագիտական եզրակացություն մշակելիս փորձաքննության են ենթարկվում

ա) փաստաթղթերի լիարժեքությունը,

բ) հասարակության, ազդակիր համայնքի և պետական շահագրգիռ մարմինների կարծիքները,

գ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության բոլոր դրական և բացասական ազդեցությունների առկայության ամբողջականությունը, ինչպես նաև դրանց փոխներգործությունը,

դ) կիրառված գնահատման մեթոդները և տեղեկատվության ամբողջականությունը,

ե) շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության վերացման կամ նվազեցման նպատակով առաջարկված տեխնիկական լուծումների համապատասխանությունը ժամանակակից գիտական և տեխնիկական մակարդակին,

զ) նախատեսված գործունեության այլընտրանքային լուծումները,

է) շրջակա միջավայրի վրա նախատեսված գործունեության վնասակար ազդեցության բացառման կամ նվազեցման, ինչպես նաև նախատեսված գործունեության կիրառման և շահագործման միջոցառումների և անհրաժեշտ պայմանների վերաբերյալ առաջարկությունները:

8. Մասնագիտական եզրակացությունը պարունակում է առաջարկություն դրական կամ բացասական փորձաքննական եզրակացության վերաբերյալ:

Հոդված 10. Փաստաթղթերի վերաբերյալ մասնագիտական եզրակացության հասարակական լուսման կարգը

1. Մասնագիտական եզրակացությունն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում լիազորված մարմինն ապահովում է մասնագիտական եզրակացության, հասարակական կարծիքի ազդակիր համայնքի ղեկավարների, ազդակիր համայնքների և համապատասխան պետական մարմինների կարծիքների հասարակական լուսմանը:

2. Լիազորված մարմինն առնվազն 7 օր առաջ գրավոր իրազեկ է պահում եռնարկողին, մարզի կամ համայնքի ղեկավարներին, ազդակիր համայնքներին, համապատասխան պետական մարմիններին և լիազորված անձանց հասարակական լուսման ժամկետի և անցկացման տեղի մասին:

Հասարակական լուսմանը կարող են հրավիրվել այլ փորձագետներ և մասնագետներ:

3. Լիազորված մարմինը հասարակայնությանը տեղեկացման հաղորդագրի մեջ նշում է հասարակական լուսման ձևը և արարողակարգը:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված մասնակիցները լիազորված մարմնի կողմից ստանում են հասարակական լուսման արդյունքների արձանագրությունը:

Հոդված 11. Նախատեսվող գործունեության վերաբերյալ փորձաքննական եզրակացության տրման կարգը

1. Լիազորված մարմնի կողմից հասարակական լուսմանը հետո 20-օրյա ժամկետում կայացվում է որոշում մասնագիտական եզրակացության և հասարակական քննարկումների արդյունքների արձանագրությունների հիման վրա փորձաքննական եզրակացություն տալու մասին:

2. Փորձաքննական եզրակացությունը ձեռնարկողին է տրվում փաստաթղթեր ստանալուց առնվազն 120-օրյա ժամկետում, եթե 9 և 14 հոդվածների համաձայն այլ ժամկետ չի նախատեսվում: Սույն օրենքով սահմանված ժամկետում լիազորված մարմնի կողմից ձեռնարկողին պատասխան չտալու դեպքում փորձաքննական եզրակացությունը համարվում է դրական:

3. Փորձաքննական եզրակացությունն ուժի մեջ է տրման պահից:

4. Փորձաքննական եզրակացությունը կորցնում է իր ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց մեկ տարվա ընթացքում, որից հետո պահանջվում է նոր փորձաքննական եզրակացություն:

5. Լիազորված մարմինը կարող է վերանայել կամ չեղյալ համարել փորձաքննական եզրակացությունը, եթե

- ընդունվել է նոր բնապահպանական օրենսդրություն,

- փորձաքննական եզրակացություն տալուց հետո ի հայտ են եկել էկոլոգիական նոր գործոններ:

Փորձաքննական եզրակացությունը վերանայելու կամ չեղյալ հայտարարելու պայմանները, ժամկետները և արարողակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փորձաքննական եզրակացության պայմանները խախտելու դեպքում լիազորված մարմինը պարտավոր է մասամբ կամ ամբողջովին փակել, կասեցնել կամ արգելել նախատեսվող գործունեության իրականացումը մինչև փորձաքննական եզրակացության համար համապատասխան պայմանների ապահովումը:

7. Եթե նախատեսվող գործունեությունը վերաբերվում է պետության պաշտպանությանը, լիազորված մարմինը պարտավոր է փորձաքննական եզրակացություն տալ համապատասխան պետական մարմինների հետ քննարկումից հետո՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության վրա:

8. Փորձաքննական եզրակացությունը 7-օրյա ժամկետում հրապարակվում է և գրավոր տեղյակ է պահվում շահագրգիռ կողմերին:

Հոդված 12. Փորձաքննական եզրակացության պարտադիր լինելը

Արգելվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն ենթակա նախատեսվող գործունեության իրականացում առանց դրական փորձաքննական եզրակացության:

Հոդված 13. Փորձաքննության հետ կապված վճարումները

1. Փաստաթղթերի պատրաստման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են ձեռնարկողի կամ հայեցակարգը ֆինանսավորողի հաշվին:

2. Փորձաքննական եզրակացություն ստանալու համար նախատեսված ծախսերը վճարում է ձեռնարկողը կամ հայեցակարգը ֆինանսավորողը: Վճարումների չափը սահմանում է լիազորված մարմինը:

(լսմբ. 13.05.97)

Հոդված 14. Շրջակա միջավայրի վրա միջսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության փորձաքննությունը

Եթե շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության պետական սահմաններից դուրս, ապա լիազորված մարմինը փորձաքննական եզրակացությունը կայացնելիս ելնում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներից: Նման դեպքերում փորձաքննական եզրակացությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 3.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ

ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 15. Փորձաքննության ենթակա հայեցակարգերը

1. Փորձաքննության ենթակա են հայեցակարգերը, որոնք վերաբերում են

- սոցիալ-տնտեսական,
- էներգետիկայի,
- քաղաքաշինության,
- տրանսպորտի,
- կապի,
- գյուղատնտեսության,
- ձկնային տնտեսության,
- լեռնահանքային արդյունահանության,
- արդյունաբերական ճյուղերի,
- առողջապահության,
- սոցիալական,
- բնապահպանության,
- հանգստավայրերի, զբոսաշրջիկության և սպասարկման ոլորտի զարգացման բնագավառներին:

Տարածքային պլանավորման փաստաթղթերը և պաշարների համալիր օգտագործման սխեմաները նույնպես համարվում են հայեցակարգեր:

2. Ներկայացնողը պարտավոր է հայեցակարգի մշակման ընթացքում իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար հետազոտությունների համապատասխան ծավալը:

3. Ներկայացնողը պարտավոր է, համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ, հաստատված կարգով ապահովել հայեցակարգի և շրջակա միջավայրի վրա նրա ազդեցության գնահատման հրապարակումը հասարակական լսումներից առնվազն 30 օր առաջ:

4. Ներկայացնողը պարտավոր է կազմակերպել հայեցակարգի հասարակական լսումներ և հաշվի առնել հասարակական կարծիքը:

5. Ներկայացնողը հայեցակարգը ներկայացնում է լիազորված մարմնին, որը կազմակերպում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և կայացնում համապատասխան որոշում հայեցակարգն ստանալուց հետո 90-օրյա ժամկետում:

6. Հայեցակարգը հաստատող մարմինն իրավունք չունի ընդունել հայեցակարգն առանց լիազորված մարմնի կողմից տրված դրական փորձաքննության եզրակացության:

ԳԼՈՒԽ 4.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 16. Փորձաքննություն իրականացնող մարմինը և նրա իրավասությունը

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնող լիազորված մարմնի կարգավիճակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Լիազորված մարմինն իրավասու է

ա) իրականացնել սույն օրենքի 4 հոդվածով սահմանված նախատեսվող գործունեությունների և 15 հոդվածում թվարկված հայեցակարգերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և տալ փորձաքննական եզրակացություն,

բ) կատարել 7 և 8 հոդվածներից բխող պահանջները,

գ) հրավիրել փորձագետներին,

դ) ստեղծել և վարել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության նյութերի և տվյալների բանկ,

ե) հսկողություն իրականացնել փորձաքննական եզրակացության պահանջների կատարման նկատմամբ,

զ) մշակել մեթոդական փաստաթղթեր շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման համար:

3. Լիազորված մարմինն իրավունք ունի իր իրավասության սահմաններում իրականացնել գործող օրենսդրությանը չհակասող այլ միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Հոդված 17. Լիազորված մարմնի պատասխանատվությունը

1. Լիազորված մարմինը պատասխանատու է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության

- եզրակացության հիմնավորվածության,
- սկզբունքների, կանոնակարգերի, նորմերի և ժամկետների պահպանման,
- անհրաժեշտ փաստաթղթերի և նյութերի ապահովման,
- աշխատանքային անհրաժեշտ պայմանների ապահովման,
- հրապարակայնության համար:

2. Լիազորված մարմինը պատասխանատու է 4 հոդվածի 4-րդ

կետից բխող որոշման համար:

Հոդված 18. Լիազորված անձանց պատասխանատվությունը

Լիազորված անձինք մասնագիտական եզրակացությունը մշակելիս պատասխանատու են - եզրակացության, եզրահանգման, առաջարկությունների և դիտողությունների հիմնավորվածության,

- փաստաթղթերի անկողմնակալ գնահատման,

- մասնագիտական եզրակացությունը լիազորված մարմնին սահմանված ժամկետում ներկայացնելու համար:

Հոդված 19. Ձեռնարկողի, ներկայացնողի և փաստաթղթեր մշակողի պատասխանատվությունը

Ձեռնարկողը, ներկայացնողը և փաստաթղթեր մշակողը պատասխանատու են

- նախագծային բոլոր փուլերում բնապահպանական պահանջների պահպանման և այդ նպատակով անհրաժեշտ աշխատանքների ու հետազոտությունների ֆինանսավորման,

- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ներկայացված նյութերի համակողմանիության, գիտական հիմնավորվածության, որակի և ստույգության,

- նախագծային լուծումների էկոլոգիական հետևանքների,

- փորձաքննության ներկայացվող նյութերի ամբողջականության, ինչպես նաև անհրաժեշտ լրացուցիչ նյութերի և փաստաթղթերի ներկայացման,

- փորձաքննական եզրակացության պահանջների կատարման,

- նախատեսվող գործունեությունը կամ հայեցակարգը հասարակայնությանը ներկայացնելու համար:

Հոդված 20. Պատասխանատվությունն օրենքի պահանջների խախտման դեպքում

Սույն օրենքի պահանջները խախտողները պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 21. Գանգատարկումը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ընթացքում առաջացած բոլոր վիճելի հարցերը գանգատարկվում են դատական կարգով Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Հոդված 22. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: